**Արձանագրություն N 3**
**«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2022/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան «23» դեկտեմբերի 2021թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Միեր Մկրտչյանը
Հանձնաժողովի բացող անդամներ՝
Հասմիկ Մանուկյանը
Ռուբեն Սիմոնյանը
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝
Գևորգ Առաքելյանը
Սերոժ Սարգսյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Փառանձեմ Խաչատրյանը

**Օրակարգ**

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

## 1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

**(Փ. Խաչատրյան)**

1.1. Հաշվի առնելով, որ գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ բավարար գնահատված բոլոր մասնակիցները 23.12.2021թ. ժամը 17:00-ին հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի, 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Սակայն բանակցություններին մասնակցեցին «ՖԼԵՇ» ՍՊԸ և «Մաքս Օիլ» ՍՊ ընկերությունները և ստորև ներկայացված չափաբաժինների գնային առաջարկները նվազեցվեցին՝ սահմանելով նոր գներ.

| Հ/հ | Գնման առարկա | Բանակցություններին մասնակցող կազմակերպությունների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Հ/հ | Անվանումները | Գնային առաջարկ/ՀՀ դրամ/ | | |
| | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Բենզին՝ ռեգուլյար | 1 | «Մաքս Օիլ» ՍՊԸ | 7,846,666.67 | 1,569,333.33 | 9,416,000 |
| | | 2 | «ՖԼԵՇ» ՍՊԸ | 7,865,000 | 1,573,000 | 9,438,000 |
| 2 | Դիզելային վառելիք ամառային | 1 | «Մաքս Օիլ» ՍՊԸ | 6,063,333.33 | 1,212,666.67 | 7,276,000 |
| | | 2 | «ՖԼԵՇ» ՍՊԸ | 6,077,500 | 1,215,500 | 7,293,000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

## 2. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

**(Փ. Խաչատրյան)**

2.1 23.12.2021թ.-ին հայտերի գնահատման նիստի ավարտի օրը, armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2022/02» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված, հայտ ներկայացրած՝

- «Մաքս Օիլ» ՍՊԸ-ին 1, 2 չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից,

2.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2022/02» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

2.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրերի նախագծերը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կից գրությամբ պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

**(Փ. Խաչատրյան)**

3.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2022/02» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ. Մկրտչյան

Անդամներ՝ _____ Ռ. Սիմոնյան

_____ Հ. Մանուկյան

_____ Գ. Առաքելյան

_____ Ս. Սարգսյան

Քարտուղար՝ _____ Փ. Խաչատրյան